ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԵՐԿՐՈՐԴ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՖՈՐՈՒՄԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 23-25-Ը ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ (ՄՈՍԿՎԱ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Էդուարդ Պետրոսյան, Միասնական սոցիալական ծառայության պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Ռուսաստանի Դաշնություն, Մոսկվա, մայիսի 23-25-ը, 2023 թ.

3. Հրավիրող կողմը.

Եվրասիական տնտեսական հանձնաժողով

4. Գործուղման նպատակը.

Մասնակցություն Երկրորդ Եվրասիական տնտեսական ֆորումի «Եվրասիական երկխոսություն աշխատաշուկայի վերաբերյալ: Մարդկային կապիտալ. Առողջապահություն» թեմայով աշխատանքային միջոցառմանը:

5. Քննարկված թեմաները.

1) Աշխատանքային միգրացիայի գործընթացների ազդեցությունը ԵԱՏՄ անդամ պետությունների սոցիալ-տնտեսական զարգացման վրա,

2) ԵԱՏՄ աշխատանքային ռեսուրսների միասնական շուկայի հետագա զարգացման հիմնական ուղղությունները,

3) 21-րդ դարի ԵԱՏՄ կադրեր,

4) Բնակչության առողջության մակարդակի բարձրացումը որպես տնտեսության հաջող զարգացման և աշխատանքի բարձր արտադրողականության գործոն:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Նստաշրջանի ընթացքում քննարկվեցին օրակարգային բոլոր հարցերը, ելույթ են ունեցել Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության ոլորտային մարմինների պաշտոնատար անձինք, Միգրացիայի հարցերով միջազգային կազմակերպության, Ռուսաստանի

Դաշնությունում Առողջապահության համաշխարհային կազմակերպության ներկայացուցիչները, ինչպես նաև Եվրասիական տնտեսական հանձնաժողովի էկոնոմիկայի և ֆինանսական քաղաքանության նախարարը (Կոլեգիայի անդամ):

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Աշխատանքային հանդիմումներ տեղի ունեցան նաև Կենսաթոշակային և սոցիալական հիմնադրամների միջազգային ասոցիացիայի (Միասնական սոցիալական ծառայությունն անդամակցում է 1992 թվականից, Հայաստանը կազմակերպության հիմնադիր անդամ պետություն է) ղեկավար անձնակազմի հետ, քննարկվեցին համագործակցության ձևաչափի փոփոխության և համագործակցության արդյունավետության բարձրացման մի շարք հարցեր:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

30.05.2023թ.

Միասնական սոցիալական ծառայության պետ **Է.Պետրոսյան**